

նական արուեստին մէջ պահած են քիչ մը իրենց հին արուեստէն, որ արդարեւ շատ աւելի պէտք է ուսումնասիրուի, որովհետեւ շատ կարեւոր է Պարսիկ եւ Թուրք զեղարուեստներուն համար, եւ ցոյց տարու համար Բիզանդական ներշնչում: Ես կը խորհիմ որ նոյնիսկ Հայոց կրօնական արուեստին մէջ ընդանդական ներշնչումը այնքան մեծ չէ՝ որքան որ ընդհանրապէս կարծուած է: Իբր աշխատողներ՝ Հայերը յաճախ Թուրքերու ծառայութեան մէջ զտնուած են, մասնաւորապէս իբր ոսկերիչ եւ արծաթագործ անոնք ճարպիկ են: Անոնք շատ լաւ կը հասկնային Թուրքերը»⁽³⁵⁾:

Հայ ազգեցութիւնը հիւսիսային Պարսկաստանի մէջ շատ կանուխն արդէն դոյութիւն ունէր: Զարմանալի նմանաձայնութիւն մը կայ ժ դարուն գործուած Արար Արտեպիլի եւ Տէպիլի կամ Տէյնիլի (Գուին) միջեւ: Իսկն Հաուզալ Արար աշխարհագիրը կը վկայէ որ Հայաստանի կը պատկանէին «Միսան, Խունահ, Բէրվանա, Խոյ, Սալմաստ, Նախիջևան, Մարանդ, Թարէթ, Բեզերէնտ, Տէրպէնտ, Խեպերան եւ ուրիշ քաղաքներ, որ սակայն դժուար թէ երբ եւ իցէ Հայաստան կարենանք նկատել բացի Նախիջևանէ, Մարանդէ եւ դուցէ Խոյ-Սալմաստէ: Տէրպէնտի մասին կ'աւելցնէ որ անկէ «կը գրկեն կտակեղէն Առանի եւ Ատրպատականի ամէն կողմը: Հոս կը շինեն նաև օթոցներ կամ գորգեր եւ կը մշակեն Սաֆրան»⁽³⁶⁾:

Իսկն Հաուզալի վկայութեանց ամէնէն հետաքրքրականը կը վերաբերի Արտեպիլի մասին. ան կը վկայէ թէ «Արտեպիլի բնակիչները կը գործածեն նաև հայերէն լեզուն»⁽³⁷⁾: Տարակոյս չկայ թէ աւելի լուրջ պրպտումներ հին գրական վկայութեանց, նա մանաւանդ պեղումներ, ցոյց պիտի տան որ հայերը հիւսիսային Պարսկաստանի մէջ ունեցած են մշակութային եւ անտեսական շատ մեծ եւ կարեւոր ազդեցութիւն. բնական է մեծագոյն մաս մը հիւսուածեղէնի արուեստին մէջ: Ասոր ապացոյց է 1574 թուին Վենետիկի Տոսին եւ Ծերակոյտին տրուած տեղեկագիրը Վինչենցոյ տէյլի Ալեսսանտրինիի (Վատիկան պահուած դիւանին մէջ) ուր կը գրէ. «Երբ ես Արքունիքը (Պարսից Շահ Թամազբի) կը զտնուէի Զուլայի չըջանին մէջ, բոլորովին հայերէ բնակուած, որոնք Արքունեաց կողմէն ութը տարուան համար հարկէ ազատ նկատուած էին, երբ յանկարծ ան (Շահը) մտնեց ամէնը մէկ պահանջել, ի կորուստ եւ աւերումն այդ քրիստոնեաներուն, ասկէ զատ Թուոխալ Պէյ, Սուլթան Հայտար Միրզայի աւագ սենեկապանը եւ թագաւորին տեղապահը, զրկուած ըլլալով տասնեւհինգ հակ հազուստներով եւ կոշիկներով «զեղչելու»

համար ստիպուած են աշխատիլ, «իրենց տէրերուն արուեստը» չէ որ իւրացուցած են, այլ խորքին մէջ քիչ թէ շատ իրենց հայ ստեղծագործութեամբ հաճելի խոսնուրդ մը տուած են անոնց, անտարակուսելիօրէն հայ կնիքով կնքուած:

⁽³⁵⁾ Oriental rugs... Dr. F. R. Martin, p. 88.

⁽³⁶⁾ Oriental Geography. — London, 1800, p. 159.

⁽³⁷⁾ Անդ, էջ 163: